ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվարի 15-ից 17-ը Ավստրիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Վարդան Արամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Վիեննա, հունվարի 15-17 ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

Ռայֆայզն միջազգային բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Եվրոմանի համաժողովի շրջանակներում կազմակերպված 2018թ. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ֆորումին և հանդիպումներ պարտքային գործիքներում ներդրողների հետ:

6. **Քննարկված թեմաները՝**

Եվրոմանի ընկերությունը միջազգային կապիտալի շուկայի մասնակիցների համար միջոցառումների համաշխարհային առաջատար կազմակերպողն է, որն ունի կառավարությունների և ֆինանսական ընկերությունների միջև կապերի հաստատման մոտ 50 տարվա փորձառություն: Միջոցառումների ընթացքում բացահայտվում և պարզաբանվում են միջազգային ֆինանսական շուկաների վերջին միտումները: Այն նաև ապահովում է մտքերի փոխանակման անաչառ միջավայր և հանդիսանում է նոր կապերի ստեղծման և շահավետ գործարար հարաբերությունների ստեղծման հարթակ: Համաժողովին մասնակցելու հրավերը նախաձեռնվել էր Ռայֆայզն միջազգային բանկի հետ 2017թ. Վաշինգտոնում կայացած Համաշխարհային բանկի խմբի և ԱՄՀ տարեկան հանդիպումների շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակում:

Այս համատեքստում համաժողովի օրակարգը խիստ հագեցած էր և ընդգրկում էր բազմաթիվ հանդիպումներ առաջատար բանկերի, ներդրումային ընկերությունների,

ակտիվների կառավարիչների հետ: Միաժամանակ, հանդիսանալով Հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական խառը հանձնաժողովի հայկական կողմի նախագահ, համաժողովի շրջանակներից դուրս հանդիպել եմ հանձնաժողովի ավստրիական կողմի նախագահ տիկին Բերնադետ Գիրլինգերի հետ:

1) Առաջին հանդիպումը կայացավ 2018 թվականի հունվարի 15-ին <<Ցե-Կվադրատ Ասեթ Մենեջմենթ>> ընկերության հետ: Ներկայացվեց <<Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա>> ընկերության գործունեությունը Հայաստանում: Շեշտվեց, որ ընկերությունը նախապատվությունը տալիս է հայկական իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական և այլ ընկերությունների հետ համագործակցությանը: Այնուհետև ներկայացվեց <<Ցե-Կվադրատ Ասեթ Մենեջմենթ>> ընկերության գործունեությունն ու զարգացման հեռանկարները: Ես ներկայացրեցի կենսաթոշակային բարփոխումների ընթացքը Հայաստանում: Ընկերության ներկայացուցիչները բարձր գնահատեցին կենսաթոշակային բարեփոխումների ուղղությամբ Հայաստանի իրականացրած աշխատանքները, նշելով, որ հանրային իրազեկման աշխատանքներում Հայաստանի փորձն ուսանելի է և կարող է կիրառվել նաև Ավստրիայում: Ներկայացրեցի նաև կապիտալի շուկայի զարգացման նպատակով մեր կողմից նախաձեռնված միջոցառումները, որոնք միտված են խթանելու մասնավոր ընկերությունների կողմից արժեթղթերի թողարկմանը: <<Ցե-Կվադրատ Ասեթ Մենեջմենթ>> ընկերության ներկայացուցիչներն ընդգծեցին երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման գծով Հայաստանի ներուժը:

2) Հունվարի 16-ին Եվրոմանի համաժողովը բացվեց մասնակից կենտրոնական և արևելյան եվրոպայի երկրների ֆինանսների նախարարների հետ հարցազրույցով, որին ներկա էին համաժողովի մոտ 600 պատվիրակներ: Ներկայացրեցի համաշխարհային ֆինանսական երկու ճգնաժամերին դիմագրավելու նպատակով Հայաստանի իրականացրած մակոտրոտնտեսական, պարտքային, հարկաբյուջետային քաղաքականությունները, որոնք միտված են կայունացմանը և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովմանը, և որոնք, ի տարբերություն տարածաշրջանի հարևան երկրների, ունեցել են ավելի քիչ բացասական հետևանքներ: Ներկայացրեցի օրենսդրական փոփոխությունները, որով սահմանվում են նոր հարկաբյուջետային կանոններ: Անդրադարձ եղավ նաև ռուսական տնտեսության

ազդեցության թուլացմանը, ինչպես նաև բանկային համակարգի դոլարիզացիայի մակարդակին ու դրա նվազեցման ուղղությամբ իրականացված միջոցառումներին, ներքին շուկայի զարգացմանը:

3) Հաջորդիվ մասնակցեցի <<Կենտրոնական և արևելյան եվրոպայի պետական պարտքի կառավարում. 2018թ. միջավայրն ու ռազմավարությունը>> թեմայով քննարկմանը: Բանախոսները քննարկեցին եվրոպական վարկային միջավայրը, տոկոսադրույքների հնարավոր փոփոխություններն ու դրանց ազդեցությունը պարտքի օպտիմալ կառուցվածքի վրա, գնաճը և դրա հնարավոր հետևանքները փոխառությունների վրա:

4) Այնուհետև տեղի ունեցավ Ռայֆայզն միջազգային բանկի կողմից կազմակերպված <<Հայաստան: Մակրոտնտեսական քաղաքականություն և զարգացման ուղի>> շնորհանդեսը, որին մասնակցում էին բազմաթիվ ինստիտուցիոնալ ներդրողներ: Շնորհանդեսի ժամանակ մասնակիցներին ներկայացրեցի համաշխարհային տնտեսության զարգացումները 2002-2016 թվականներին, Հայաստանի տնտեսական աճի ուղեգիծը նույն ժամանակահատվածում, երկու արտաքին շոկերի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա, հետևանքները մեղմելու նպատակով իրականացված հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունը, կոորդինացված դրամավարկային քաղաքականությունը, կառավարության պարտքի ցուցանիշները: Այնուհետև ներկայացրեցի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ուղղությունները 2017թվականին և նպատակադրումները 2018 թվականից հետո, որոնք միտված են երկարաժամկետ կայունության ապահովմանը: Մանրամասն անդրադարձա նոր հարկաբյուջետային կանոնների ներդրմանը և <<ոսկե կանոնին>> վերադարձին: Նշեցի, որ կապիտալ ծախսերի ավելացումը կխթանի ներդրումներն ու երկարաժամկետ աճը, հարկաբյուջետային կոնսոլիդացիան կապահովի կայուն մակրոտնտեսական միջավայր, հարկային եկամուտների հետագա աճ: Իսկ իրականացվող քաղաքականության արդյունքում տնտեսությունը կվերականգնվի աճի մեծ տեմպերով, ընթացիկ հաշվի պակասուրդը կգտնվի կայուն մակարդակի վրա, կկայունանա կառավարության պարտքը, իսկ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կնվազի, կապահովվի բանկային համակարգի հետագա կայունությունը: Շնորհանդեսի վերջում ներկայացրել եմ կառավարության կողմից նախատեսվող կառուցվածքային բարեփոխումները, մասնավորապես, անցում արտահանման

ավելացմամբ պայմանավորված աճի մոդելին, գործարար միջավայրի բարելավում, ներդրումների և մրցակցության զարգացում, էլեկտրոնային կառավարում և պետական հատվածի թվայնացում, ծրագրային բյուջետավորում, էլեկտրոնային գնումներ, հարկային վարչարարություն, արտաքին տնտեսական քաղաքականություն՝ Հայաստանի և Եվրամիության միջև 2017թ. ստորագրված համագործակցության համաձայնագրի արդյունքում առկա նոր հնարավորություններ և Իրանի հետ սահմանին ազատ տնտեսական գոտու ստեղծում: Շնորհանդեսի վերջում տրվեցին հարցեր 2018թ. փոխառությունների, ընթացիկ հաշվի պակասուրդի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ Հայաստանի համագործակցության վերաբերյալ: Բոլոր հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

5) Հաջորդ հանդիպումը Ռայֆայզն միջազգային բանկի գործադիր տնօրեն Յոհան Սթրոբլի հետ էր: Շնորհակալություն հայտնելով նման ներկայացուցչական միջոցառմանը հրավիրելու համար, քննարկեցինք հետագա համագործակցության հեռանկարները: Այնուհետև քննարկեցինք 2020թ. մարման եվրապարտատոմսերի վերաֆինասավորման հնարավոր սցենարները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել հետագա վերլուծություններն այս ուղղությամբ: Պարոն Սթրոբլն արձանագրեց, որ շնորհանդեսի մասնակիցները տպավորված են և շնորհակալություն հայտնեց ներկայացման համար:

6) Հաջորդիվ տեղի ունեցավ հանդիպում Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեի հետ: Հանդիպումը, թեև առավել քաղաքավարական բնույթի էր, քննարկեցինք երկկողմ առևտրատնտեսական կապերի խորացմանը, բարեփոխումների (հարկային, կենսաթոշակային և այլն) իրականացման գծով փորձի փոխանակմանը, երկու երկրներում գործող առևտրային ռեժիմների, ազատ տնտեսական գոտիների հնարավոր օգտագործմանն առնչվող հարցեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ձևավորել աշխատանքային խումբ, որը կզբաղվի այդ խնդիրների լուծմամբ:

7) Հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ Սևծովյան առևտրի և զարգացման բանկի ներկայացուցչի հետ, որի ընթացքում քննարկվեց բանկի հետ համագործակցության և երկկողմ հարաբերությունների հետագա խորացման հեռանկարները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց բանկի կողմից ներդրումային ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով ապահովել համագործակցությունը բանկի և ՀՀ

տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության միջև՝ ներդրումային ծրագրերի հարթակը որպես տիպային օրինակ բանկի կողմից կիրառելու նպատակով:

8) Այնուհետև տեղի ունեցան առանձին- հանդիպումներ Deutsche, HSBC, City բանկերի, Euromoney plc ընկերության և Չինական բանկի ներկայացուցիչների հետ, որոնց շրջանակներում քննարկվեց հետագա համագործակցության հեռանկարները, ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը, կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների ընթացքը, արձանագրված և սպասվելիք արդյունքները, ներքին շուկայում իրականացված բարեփոխումները: Մասնավորապես ներկայացրեցի հանդիպման օրը ներքին շուկայում Հայաստանի տեղաբաշխած 30 տարի մարման ժամկետով պարտատոմսերի հավելավճարով տեղաբաշխման արդյունքները, ինչը բարձր գնահատվեց առաջատար բանկերի կողմից: Մտքերի փոխանակում տեղի ունեցավ ՀՀ կողմից նոր եվրապարտատոմսերի թողարկման, շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հնարավոր հետգնման կազմակերպման վերաբերյալ: Ես ներկայացրեցի 2020 թվականի մարման եվրապարտատոմսերի վերաֆինանսավորման հնարավոր 4 տարբերակներ՝ 1) Նոր պարտատոմսերի թողարկում մարման մոտ ժամկետին, 2) Համաշխարհային բանկի քաղաքականության վրա հիմնված երաշխիքի (PBG) գործիքի կիրառում, 3) Դոնոր կազմակերպություններից ֆինանսական միջոցների ներգրավում, 4) Ներքին շուկայից միջոցների ներգրավում և պաշարի ձևավորում: Յուրաքանչյուր բանկի հետ առանձին քննարկեցինք հնչեցված տարբերակների առավելություններն ու թերությունները: Բանկերի կողմից ընդգծվեց, որ Հայաստանը միջազգային կապիտալի շուկայի մասնակիցների մոտ ունի բարձր որակի թողարկողի հեղինակություն, իսկ PBG գործիքի կիրառումը կխաթարի Հայաստանի հեղինակությունը, բացի այդ, հաշվի առնելով երաշխիքի սպասարկման հետ կապված ծախսերը, գործարքի գինը չի կարող ցածր լինել: HSBC բանկն առաջարկեց քննարկել միջազգային կապիտալի շուկայում ՀՀ դրամով պարտատոմսերի թողարկման հնարավորությունը: Բոլոր բանկերի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ առավել մանրամասն վերլուծելով քննարկվող տարբերակները, բանկերից յուրաքանչյուրը մեզ կներկայացնի 2020 թվականի պարտատոմսերի վերաֆինանսավորման հնարավոր գործարքի իր տեսլականը: Բանկերի հետ քննարկվեց նաև կապիտալի շուկայի առկա միտումներն ու սպասումները:

9) Հունվարի 17-ին հանդիպեցի Հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական խառը հանձնաժողովի ավստրիական կողմի նախագահ, Ավստրայի Հանրապետության Թվայնացման, գործարարության և ձեռնարկատիրության նախարարի տեղակալ տիկին Բերնադետ Գիրլինգերի հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաև ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանը: Հանդիպման ընթացքում մտքեր փոխանակվեցին հայ-ավստրիական համագործակցության կառույցի առաջիկա 8-րդ նիստի նախապատրաստման շուրջ: Քննարկվեցին նաև 2016թ. ապրիլին Վիեննայում տեղի ունեցած հանձնաժողովի 7-րդ նիստին ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը, ոլորտային մակարդակով տեղեկատվությունը, և փորձը փոխանակելու ու կողմերի հանձնառությունները լավագույնս ի կատար ածելու ուղիները:

Գրեթե բոլոր հանդիպումների ընթացքում հնչեցվեց ՀՀ ֆինանսների նախարարության որդեգրած սկզբունքն այն մասին, որ պոտենցիալ ներդրողների հետ շարունակվելու է տարվող թափանցիկ և հետևողական աշխատանքը՝ նպատակ ունենալով վերջիններիս անմիջականորեն ներկայացնել ՀՀ մակրոտնտեսական և քաղաքական իրավիճակը, կառավարության ծրագրերը և նախաձեռնությունները, նախադրյալներ են ստեղծվելու ՀՀ վարկանիշի բարձրացման և ՀՀ անունից առաջիկա եվրապարտատոմսերի թողարկումների համար վստահելի և բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյան

8.Ստորագրությունը, ամսաթիվը